

ՀԱՅ Բ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելյան

Էնկիւրիի բանտարկելոց ուշագրաւ աղերսագիրն ուղղեալ առ եւրոպական դեսպանս և առ մեծ եպարքոսն, գրուած է բանտին մէջ: Մեզ յղուած օրինակն Պոլսէն ճամբայ ելած է:

*

* *

Նորմեան Հայրիկի Երուսաղեմէն ուղեւորելուն նկատմամբ ստոյգ լուր Հկայ ցայսօր, 30 Յուլիս:

*

* *

Տիարք Թումայեան և Գայանեան Հասած են իլոնտրա: Ամերիկայի դեսպանն ի Կ. Պոլիս կը ջանայ, կ'ասեն, համոզել թուրք կառավարութիւնն որ թոյլ տայ երկու ուսուցչապետացն դառնալ ի Թուրքիա իրենց պաշտօնին: Չեմք կարծեր թէ կառավարութիւնն հաւանի, եւ եթէ կառավարութիւնն հաւանի իսկ, չեմք կարծեր թէ ուսուցչապետքն խոհեմութիւն պիտի համարին վերադառնալ, քանզի ու է դոյցն պատրուակաւ կրնայ կառավարութիւնն նորէն ու նորէն նեղել զիրենք:

Սուլթանն կը մտածէ թէ Թումայեանի ու Գայանեանի նման երկու ձեռնհաս ուսուցիչներու Տաճկաստանէն արտաքսմամբ Հայոց կրթական գործոյն աւելի մեծ փնաս կը լինի քան թէ այդ երկուքի հակաթուրք ճառերէն եւ Հրատարակութիւններէն յեւրոպա կրնայ օգուտ հասնիլ Հայոց դատին: խորագէտ Սուլթանն աւելի վախ ունի իւր հողոյն վերայ աշխատողներէն քան արտասահմանի—աւելի կ'ատէ Հայոց նոր սերունդն դաստիարակեալ տեսնել քան թէ արդէն դաստիարակեալներու երթալ Եւրոպայի մէջ բողոք բառնալ:

*

* *

«ՀԱՅԲ»Ի ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Առ Մեծ. Տէր Մուրատ (Կալկաթա), ի ձեռն Մեծ. Տէր Իսկէնտէրի, 30 Քրանք.— Տէր Գրիգոր Գասպարեան (Հեղինակն Մարզարանի) 5 տուար.— Տէր Թ. 2 տուար, զոր կը նուիրէ, կ'ասէ, յոյժ սիրած լինելով Հայքի «Ազգային Քաղաքականութիւն» խորագրով յօդուածն.— Տէր Արշաւիր Բ. որ ի ցոյց իւր ջերմ համակրանաց առ «Հայք» ձրիապէս շիներ է Տէր Եղնիկ եպիսկոպոսի պատկերն և ի մտի ունի դեռ ուրիշներ ալ շինելու անձնութիւնը.— Տէր * * 3 տուար:



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հայոց
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," Լն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎՆՆԻՆԿՈՒԹԻՒՆ

Հայոց Խնդիրն. տեսութիւն Բաբկայ.—
Պատմէն հայ բանտարկելոց աղերսագրին ուղ-
ղեալ առ ղեսպանս մեծ պետութեանց իԹուր-
քիա.— Ցանկ անուանց դատապարտելոց.—
Նամակ Եգիպտոսէ.— Ամերիկայի Հայերն.
Խնդիր Ամերիկացի քաղաքացի լինելու.— Նա-
մակ իՔալիֆոռնիոյ.— Ազգային, Քաղաքական
լուրեր :

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կոմ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Նգ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան : Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

Գ. Ուսումնասիրութիւն
Ազգային Քաղաքականութեան

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԲԱՅԿԱՅ

(Շար. և վերջ Տես նախորդ թիւն)

Բ

Նախորդ յօդուածով ջանացինք բա-
ցատրել Հայոց Խնդիրն և հաստատել ա-
նոնց իրաւունքն ինքնօրէն վարչութիւն
պահանջելու Հայաստանի այն մասին հա-
մար որոյ սահմաններն որոշ կերպով ցու-
ցուած են Հայ պատգամաւորաց միջոցաւ
Պէրլինի վեհաժողովին արուած յիշատա-
կագրին մէջ : Կատարեալ համոզումն գոյ-
ացած է այժմ թէ կարելի չէ ուրիշ մի-
ջոցով լուծել Հայոց խնդիրը :

Եւրոպական տէրութիւնք Թուրքիայ ամ-
բողջութեան ստորադասելով բարեկար-
գութիւններն ոչ միայն բարեկարգութիւն-
ները զոհած են այլ եւ թուրք պետու-
թեան ամբողջութեան սպառնացող վը-
տանգը մեծցուցած են : Առանց եւրոպեան
հսկողութեան և ուղղակի միջամտութեան
Թանզիմատ և իսթիթի Հիւմայուններ ե-
ղած եւ մնացած են փոխարէնը չհատու-
ցուած փոխանակագրեր : Մր. Կլաւսթոն
1880 Յուլիս 20ին կ'ըսէր. «տէրութիւնք
ըսած էին իրենք իրենց, մենք կը յանձ-
նարարենք թուրք պետութեան իւր երկ-
րին մէջ մտցունել բարեկարգութիւններ,
բայց բարեկարգութիւնք ստորադասեալ
պիտի ըլլան սա գլխաւոր չահուն, Օսմա-
նեան պետութեան ամբողջութեան : Ի՞նչ
եղաւ հետեւանք. Թուրքիա թէ և ունե-
ցաւ քսան տարւոյ հանգիստ, չիրագոր-
ծեց տէրութեանց բաղձացած բարեկար-
գութիւններն և համոզեց տէրութիւննե-
րն սա մասին թէ թուրք կառավարու-
թեան հետ խօսելու ատեն հարկ էր փո-
խել խօսելու եղանակը : Որչափ ալ փա-
փաքելի ըլլայ մեզ արգելուլ խառնաշփո-
թութիւնները որ կրնան յառաջ գալ
թուրք պետութեան քակտումէն և կոր-
ծանումէն, սակայն և այնպէս ես կենա-

լու չենք յայտարարել է թէ թուրք կառավարութեան իւր հպատակաց նկատմամբ յանձն առած պարտականութեանց կատարումն չէ երկրորդական խնդիր, այլ է առաջին խնդիր, և այս է նպատակն առ որ ձգտելու են մեր ջանքերը»

Թուրք պետութեան ամբողջութեան համար էական պայման համարուած բարեկարգութեանց խնդրոյն մէկ մասն է Հայոց խնդիրը, և ոչ թէ թուրքիոյ մէջ ընդհանուր յեղափոխութիւն յարուցանելու, Օսմանեան պետութիւնն տապալելու և նոյն իսկ դարաւոր հարստահարութեանց համար վրէժ լուծելու խնդիր։ Հայք Հայաստանի ինքնօրէն վարչութեան խնդիրը բոլորովին զատ պահելու են ուրիշ խնդիրներէ։ Սերպը 1814—5ին ի պէն դիմեցին ոչ վասն զի բոլոր Սլաւաց վիճակն անտանելի եղած էր թուրք փաշաներու և Եփեսոսիներու վայրագութեան պատճառաւ, այլ վասն զի իրենք այլ ևս չէին կրնար դիմանալ սոսկալի աւերածոյն և բարբարոսութեանց որոց թատր եղած էր իրենց երկիրը։ Յունաց երկարատեւ ապստամբութեան ատեն բոլոր ազգին սիրտն և ոգին Յունաստանի վրայ միայն էր, և ամեն բանէ առաջ Յունաստան ազատ ընելու համար հեղեղի նման հոսեց արևուն։ Ամեն կողմէ Յայներ Յունաստանի սրբազան հողին վրայ կռուելու վազեցին։ Պուլկարը թուրք կառավարութեան ծանր լծոյն ներքեւ հեծող ուրիշ ժողովրդոց դատին համար չեղան ոտք, նախ իրենց պատին, իրենց երկիրը պաշտպանել և իրենց ազատութիւնը ձեռք բերել խորհեցան։ Այսպէս Հայք նախ իրենց հայրենի երկրին վիճակը բարւոքելու, Հայաստանի համար ինքնօրէն վարչութիւն ձեռք բերելու աշխատելու են։ Հայաստանէն դուրս ի դէպս և յանդէպս խլրտումներ և ցոյցեր Հայոց խնդրոյն լուծումը դիւրացնելու շատ չեն նպաստեր։ Արդարեւ քաջալերական է իրաւանց գիտակցութեան և ինքնապաշտպանութեան ոգւոյ զարթնումն Հայոց մէջ, բայց ճիշդ այսպիսի ատեններ նոր արթնցող ժողովուրդք կը կարօտին խոհեմ առաջնորդներու։ Ամեն ժամանակ և ամեն պարագայի տակ ցոյցեր ընել բռնութեան դէմ բռնաւորի զէնքերով, բայց առանց խորհուրդի և առանց պատրաստութեան կռուիլ, մանաւանդ արդարութեան կռուոյ մէջ եղեւնական մի-

ջոցներ գործածել կրնան ըլլալ վնասակար և աղետաբեր։ Արդէն այն անուր խստութեանց և անգութ հալածանաց տակ, զորս թուրք կառավարութիւնն վերջին տարիներս ձեռք առած է Հայոց դէմ, կարի դժուարին գործ է Հայոց մէջ արթնցած ոգին և եռանդը վառ պահել և աւելի տարածելու համար յայտնի հնարներ գործածել։ Անխորհուրդ ցոյցեր թուրք կառավարութեան կասկածն աւելցնելով պատճառ կ'ըլլան խստութեանց աւելնալուն և կը վնասեն բուն նպատակին։ Միւս կողմանէ ստոյգ է նաև թէ ոչինչ կ'ընէ ազատութեան սէրն այնպէս զօրաւոր ինչպէս չափազանց բռնութիւն, թէ մարտիրոսաց արիւնն եղած է սերմն քրիստոնէական եկեղեցւոյ, բայց հեռատես, կորովի և ճարտար մտաց գործ է որոշել շարժելու և կանգ առնելու, բողոքելու և արիւն թափելու ժամանակը։ Այս Պատճառաւ փափաքելի է որ ազգին մէջ իրենց տաղանդով, հմտութեամբ, փորձառութեամբ և հայրենասիրութեամբ ընդհանուրին վստահութեան արժանի մարդիկ ոչ թէ քուէով այլ ինքնաբերաբար գան մէկտեղ և յանձն առնուն Հայոց խնդրոյն լուծման համար ներսէն և դրսէն միաբանութեամբ աշխատելու ահաւոր բայց սրբազան գործը։ Իրաւանց և ազատութեան սերմունք սերմանուած են, բայց խնամքի և դարմանի պէտք ունին պտղաբեր ըլլալու համար։ Հայ ժողովուրդն մասամբ իւրիք արթնցած է, բայց չգիտեր ինչ ընել։ Զօրացունելու է ժողովրդեան հաւասար իրեն վրայ, և անջնջելի կերպով տպաւորելու է Հայաստանի Հայոց մտաց մէջ թէ իրենք դատապարտուած չեն յաւիտեան հեծել բռնութեան և հարստահարութեանց ներքեւ։ Հասկցնելու է անոնց թէ ոչ մի ժողովուրդ երկար ատեն մնացած է ստրկութեան մէջ առանց արժանի ըլլալու ըստրուկ վիճակի, և ազատելու առաջին պայմանն է ազատութեան իրօք արժանի ըլլալ և յօժար տալու ազատութեան գինը։ Իրենց իրաւանց գիտակցութեան հետ համերաշխութեան գաղափար տարածելու է հայաբնակ գաւառաց Հայոց մէջ որպէս զի միասին զգան, միակերպ խորհին և միաբան գործեն։ Աննպատակ ցոյցերը չքաջալերելով հանդերձ սիրտ տալու է հայ ժողովրդեան ամուր բռնել իրենց իրաւունքը, չահաբեկիլ զեղծ պաշտօնէից բռնու-

թեանէն, Քիւրդերու և Չէրքէզներու սպառազինութեանէն, և հայրենի տանց, իրենց արդար ընչից, պատուոյ և կենաց պահպանութեան համար միեջև իմազ դէմ դնել, և անարդար դատաւորներու անիրաւ վճիռներու դէմ բողոքել ցյետին չունչ: Մէկ հայ անհատի, մէկ հայ գիւղի, գաւառի մի մէկ մասին Հայ բնակչաց դէմ եղած անիրաւութիւնք և զրկանք Հայերը շարժելու են ի գայրոյթ, թոյլ չի տալու հարստահարողաց անպատիժ և անիրկիւղ դործել չարիք: Անիրաւութեան դէմ գանգատելով պատժուիլ իսկ դէպ ի յաղթութիւն մեծ քայլ առնուլ է: Եթէ բռնութիւն և անիրաւ պատիժներ բաւական ըլլային բողոքողին ընկճելու և իմահաչուք լուծեան դատապարտելու արդարութեան և ազատութեան ոգւով վառեալ ժողովուրդներ, բռնաւորք իմաստութեամբ ընտրած կը լինէին իրենց միջոցները և զէնքերն: Սակայն պատմութիւնը հակառակը կը հաստատէ: Հզօր հաւատք և անխախտ որոշում, ահա կարեւորագոյնք: Երբ կայ հզօր հաւատք, ոչ հրապոյր, ոչ սպառնալիք, ոչ բանտ, ոչ տանջանք, ոչ հուր և ոչ սուր կրնան խախտել զմարդ այնպիսի հաւատքէ:

Բռնաւորք ոչ ինչ կ'ատեն աւելի քան զլոյս, քան զազատութիւն գրելոյ և խօսելոյ, վասնզի գիտեն թէ իրենց խաւարի գործերն լուսոյ մէջ կը խայտառակուին, և այսպէս իրենց դէմ կը հանեն հանրային կարծիքն: Անգթութիւնք և անիրաւութիւնք մօտ են վախճանի երբ իրենց բոլոր ժանտութեամբք և արհաւրօք կը հանուին ի լոյս: Թուրքիոյ եւրոպական գաւառներու քրիստոնեայ ժողովրդոց տառապանաց վերջին ժամն հնչեց այն ատեն երբ Եւրոպայի հանրային կարծիքն սոսկմամբ և ցասմամբ ելաւ բարբարոսաց դէմ, և արդարութիւն գոռաց հարստահարելոց համար: Հրացան գործիներէ առաջ հանրային կարծեաց զայրութէն արձակուած գնդակներն և ռումբերն տուին բռնապետութեան: Եւրոպայի հանրային կարծիքն էր որ ամէն անգամ յարոյց բերեկմներ և զօրացոյց անոնց բազուկներն տկարաց և զրկելոց արդար պատերազմները պատերազմելու: Ո՛ւր էր թէ պետութեանց ժողովներէ աւելի գերագոյն այս ատենին, եւրոպայի հանրային կարծեաց առջեւ հանուէին Հայոց բոլոր արիւնոտ

վէրքերն և անհաւատալի վայրենութիւնք անոնց թշնամեաց իրենց բոլոր ահաւոր երեւոյթներով, այն ատենին վճռոյն տալեւ կը լռէին ազգաց քաղաքական շահերու ձայներ և կը դադարէին տէրութեանց իրարու դէմ նկատումներ: Հայոց համար կարեւոր է իրենց արդար դատը բերել այս անաչառ ատենին առջեւ և արդարութիւն պահանջել յանուն հասարակաց մարդկութեան, յանուն դաշնագրերով ճանչուած և անամօթաբար բռնաբարուած իրաւանց: Այս մասին Պ. Չերազի ըրած ծառայութիւններն անուրանալի են, արդարեւ նա իւր թերթով, բողոքներով և դիմումներով առ կառավարութիւն և ատենախօսութիւններով Անդգիոյ մէջ մեծապէս նպաստած է Հայոց դատին և շահած է ոչ սակաւ բարեկամներ, սակայն դատը մեծ է, խնդիրը մտնու և կենաց խնդիր է, ուստի և պէտք կայ հայրենանուէր, կարող և հմուտ անձերու գործունէութեան: Թուրք կառավարութեան վերջին տարիներու Հայոց դէմ ձեռք առած բռնական միջոցներն, թուրք խուժանին վայրագութիւնք և հայ հայրենաւորոց մարտիրոսութիւնք հրատարակուելու են Անգլիական, Փաղղիական, Գերմանական, Իտալական և Ռուսական նշանաւոր թերթերու մէջ, եթէ հնար է: Կազմուելու են առաքելութիւնք Հայոց խնդիրը և Հայոց աղէտները քարոզելու, և այս առաքելոց բերնէն աշխարհ լսելու է Հայոց հեծութեանց ձայները և իրաւունքը:

Նոյն ատեն եւրոպա և Ամերիկայ հրատարակուած հայ թերթեր մեծ դործ ունին կատարելու: Այս թերթեր ոչ միայն բերան են Հայոց, թարգման անոնց զգացմանց այլ և առաջնորդ Հայաստանի ինքնօրէն վարչութիւն ձեռք բերելու շաւղին մէջ: Ասոնք լիովին կը վայելեն գրելու ազատութիւն որ կը զլացուի ուրիշ երկիրներու մէջ հրատարակուած հայ թերթերու, և այն չափով որով ունին ազատութիւն, պարտական են ծառայել սուրբ գործին: Հայոց խնդրոյ վրայ իմաստուն յօդուածներ ժողովուրդն արթնցնելու և ինքնապաշտպանութեան վարժեցունելու համար հասուն խորհուրդներ և ցիրուցան զօրութիւններն ի մի վայր հաւաքելու համար խոհական և արդիւնաւոր միջոցներ իրաւամբ կը սպասուին այս հայ թերթերէ:

Ամենուն նպատակը գրեթէ նոյն է, անոնց ուղղութիւնն ալ նման և որոշ ըլլալու է: Մինչ կը նշաւակեն այս թերթեր թուրք կառավարութեան զեղծմունք, կը բանան Հայոց արիւնոտ վէրքերը, նոյն ատեն ցուցնելու են դարմաններ, և ուղիղ ճամբան ընդ որ ընթանալ պէտք է, և մոռնալու չեն թէ ազատութեան հական պայմաններէն է ժողովրդեան մէջ ազատութեան արժանի առաքինութիւններ մշակել և ջանալ ուղղել թերութիւններ և մոլութիւններ զորս յառաջ բերած են Հայոց բարուց մէջ դարաւոր դերութիւն և հալածանք: Այս հայ թերթերու խմբագիրք տառապեալ Հայրենեաց ազատութեան սեղանին պաշտօնականներ են և հասկնալով իրենց պաշտօնին նուիրականութիւն և պատասխանատուութիւնը պարտին ահիւ և դողութեամբ պաշտել: Հայք իրենց հաւատքն, յոյսն և լոյսն մեծաւ մասամբ կ'առնուն ազատ երկիրներու մէջ հրատարակուած հայ թերթերէ, ուստի ժամանակը կը պահանջէ որ այն թերթերու խմբագիրք ըլլան մարդիկ որ ունին մեծ ոգի, ճշմարիտ հաւատք, զօրաւոր միտք և պատրաստ կեանք, մարդիկ որոց ուղղութիւնն, բնաւորութեանց ազնուութիւնն և Հայրենասիրութիւնն կասկածէ վեր են: Թէ ազատ երկիրներու մէջ Հայոց դասին համար ազգային թերթեր որչափ կարեւոր են այսօր կը վկայեն թուրք կառավարութեան մոլեգին զայրոյթն այն թերթերու դէմ և յիմարական միջոցներն զորս ժամանակ ժամանակ ի գործ դրած է զանոնք խափանելու համար: Այս թերթերու հայ խմբագիրք դողալով ձեռք առնելու են զրիչ, մանաւանդ սոսկալու են երբ թողլով իրենց նուիրական գործն կ'ենեն զիրար դատաւիտելու Հայոց արդէն ոչ բաւական զօրութիւնն բաժնելու: Այս ճգնաժամ երկրորդական միջոցներու համար իրարու հետ կոտելու ժամանակ չէ:

Այն Հայեր որ թուրքիոյ այլ և այլ գաւառներէն մինչև յԱմերիկա և այլ հեռաւոր երկիրներ գաղթելու դժնդակ հարկին մէջ գտնուած են, թուրք կառավարութեան աշխարհաւեր քաղաքականութեան կենդանի վկայք են ուր որ գտնուին, և պարտին ըլլալ Հայաստանի ինքնօրէն վարչութեան քարոզներ: Անոնք կը տեսնեն ազատ և բռնաւոր կառավարու-

թեանց տարբերութիւնն, տեսնելու են նաև ազատ ժողովրդոց քաղաքային և ընկերային առաքինութիւնները, և շնչելու են այն ոգին որ միակ նեցուկն է ազատ կարգաց և կանոնաց: Այս ոգին է ճշմարիտ ազատամտութեան, իրաւանց և արդարութեան և սիրոյ ոգին: Գաղթական Հայեր ազատ երկիրներու մէջ աւելի դատապարտելի կը լինին երբ գերի ժողովրդոց մոլութիւններուն վրայ կա'ւելցունեն նոր մոլութիւններ: Ունին պատուական պատեհութիւններ սովորելու այն ժողովուրդներէն որոց մէջ կ'ապրին օրէնքներն միութեամբ գործելու, օգուտներն զգացում և զաղափար փոխանակելու, կարծեաց տարբերութիւն յարգելու և հասարակաց օգտին համար անձնական կիրքեր և փառասիրական նկատումներ մէկդի թողելու: Ոչ միայն խօսելու այլ եւ գործելու ազատութիւն կը վայելեն և ազգին ու ապագային առջեւ պատասխանատու են երբ չեն գործեր խոհեմութեամբ և արդիւնաւոր կերպով: Հոյոց խնդրոյն լուծման համար երբեմն ժողովներ կազմել, բողոքներով և կոծերով օգը թնդացունել և ուխտեր ընել միայն բաւական չէ, ճշմարտապէս անձնուէր ըլլալու է, տալով ոչ գրամ միայն և առատութեամբ, այլ զոհել ինչ որ հնարաւոր և հարկաւոր է մեծ նպատակին:

Ներկայ ճգնաժամուն մէջ ահաւոր է պատասխանատուութիւն զոր ունին ազգին գլուխներն և պաշտօնական մարմիններն առ Աստուած և առ Հայրենիս: Երբ Հայաստան արհաւիրաց մէջ ինկած է, երբ Հայեր հարկւրներով կը բանտարկուին, կ'աքսորուին և ի մահ կը դատապարտուին, երբ թուրք խուժանն կատղած կը յարձակի նուիրական վայրերու վրայ և կը բռնաբարէ Հայոց պատին և կը համարի կառավարութեան հաճելի պաշտօն մատուցանել, այլ ևս ժամանակ չէ լռելու: Այս ժամանակին մէջ հարկաւոր են մարդիկ որ բռնաւորաց հրապոյրներէ չեն խաբուիր, և անոնց սպառնալիքէն չեն երկնջիր, մարդիկ որ սիրտ, համոզումն և կամք ունին: Այլ ևս չկայ տեղի յուսուլու թէ աղերսանօք, պաղատանօք կարելի է ձեռք բերել ապահովութիւն որ դաշնագրով երաշխաւորուած բայց գործով զլածուած է: Ինչո՞ւ չեն կանգնիր Հայոց գլուխներն եւ չեն կատարեր իրենց ուխտն

դնելու կեանքն իրենց հօտին վրայ, մինչ հօտը գազանաց կեր կ'ըլլայ: Այն ինչ չի կար Պէրլինի դաշնագիր, Հայոց պատրիարքներ և երեսփոխանական ժողովներ անվեհեր կը յուզէին հայաբնակ գաւառաց հարստահարութեանց խնդիր, նուազ լուսաւորեալ ժամանակներու մէջ՝ Հայ կրօնականք և ոչխարհականք կ'արհամարհէին բանտ և աքսոր հայրենի արտօնութիւններ անաղարտ և անվթար պահելու, այժմ որ դաշնագրով իրաւունք եւ ապահովութիւն ունին, ինչո՞ւ Հայոց պատրիարք և վարչական մարմինք սիրտ չունենան անիրաւութեանց դէմ թողոքելու և եւրոպական տէրութեանց և ազգաց առջեւ Հայոց թշուառութեանց թարգման կանգնելու: Պատրիարքական իշխանութիւնն որչափ սիրելի և հրապուրելի է, Սուլթանի եւ զեզծ պաշտօնէից հաճութիւնն ա՞յնչափ փափաքելի է որ արեան եւ գերութեան շղթայից գնով գնուին: Ժամ է որ Պատրիարք եւ վարչական մարմինք դադրին յանուն ժողովրդեան խօսելէ երբ քաղութիւն չունին ժողովրդեան ցաւերն յայտնելու, ժողովրդեան դատը պաշտպանելու եւ երբ յօժար չեն ժողովրդեան իրաւանց համար հալածանաց փառքն աւելն փառքէ վեր դասելու:

Երբ պատրիարք եւ կեդրոնական վարչութիւն բռնութենէ դարհուրած ամօթապարտ լռութիւն կը պահեն, երբ բռնութիւնն նոր շղթաներ կը դարձնէ Հայոց ոչ միայն մարմիններն այլ եւ սիրտներն ու միտքերն կապելու կաշկանդելու, երբ սրբութիւնք կը լինին ոտնակոխ, ամենայն Հայոց Վեհ. Հայրապետն, իբրեւ ծայրագոյն Պատրիարք Հայոց, կրնայ ձեռք առնուլ Հայոց խնդիրը, դիմել եւրոպական ազգաց եւ տէրութեանց եւ նկարագրելով իւր ժողովրդեան անտանելի վիճակը դարման խնդրել: Վեհ. Հայրապետն իբրեւ գլուխ հայ պատգամաւորաց առ վեհաժողովն Պէրլինի կրնայ իրաւամբ ցուցանել եւրոպական տէրութեանց թէ աւելի զկծեցուցած է Հայոց վէրքերն այն սպեղանին զոր անոնք տուին իբրեւ դարման: Վեհ. Հայրապետն կրնայ նաեւ դիմել Ռուսիոյ Վեհ. կայսեր, որ երբ ուզէ, գիտէ ինչպէս պաշտպանել պաշտպանել հարստահարեալները: Ինչ որ ալ ըսուի Ռուսիոյ քաղաքականութեան վերայ, բանուրանալի է թէ մինչեւ ցարդ թուրքի-

ոյ լծէն աղատուած քրիստոնեայ ժողովրդոց համար եւրոպական ոչ մի ազգ Ռուսաց ազգէն աւելի արիւն հեղած եւ աւելի մեծ զոհողութիւններ ըրած է: Հայոց ազգն ազատարար պիտի ճանչնայ եւ հրախտագիտութեամբ պիտի յիշէ ո՞ր ազգ, որ տէրութիւն որ օգնէ ա՜նոր ներկայ ահաւոր վիճակէն ազատելու:

Տարակոյս չկայ թէ ներկայ ճգնաժամ երկար չկրնար տեւել: Երբ իսաղաղական բոլոր միջոցներ սպառելէ ետքն Հայոց վիճակին մէջ բաղձածուած փոփոխութիւնն յառաջ չգար, Հայոց համբերութեան ալ վախճան կուգայ: Յուսահատութիւնն խոհեմ խորհրդատու չէ: Գոյութեան համար կուոյ մէջ հաշուի չառնուիր ուժերու անհաւասարութիւն: Յունաստանի, Հէրսէք Պոնայի եւ Պուլկարիոյ արինալից տեղարանները կրնան կրկնուիլ Հայաստանի մէջ, եւ հետեւանաց համար սոսկալու են անոնք որ պատասխանատու են: Իւր իրաւանց եւ արդարութեան համար կըռուելով անհետ եղած ժողովրդեան պատմութիւն դեռ գրուած չէ:

ԲԱՅԻԿ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(«Հայք»էն հանուած)

Մ. Ս. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուղադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գորիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի ըլլալ ընծայուած է այդ ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ՆԵՄՆԿ Ի ԳԵՂԱՏԻՈՅ

ԷՆԿԻՐԻԻ ԲՆՏԱՐԿԵԼՈՅ

ԱՂԵՐՍԱԳԻՐՆ

ԱՌ ԴԵՍՊԱՆՍ ԵՒ ԱՌ ԵՊԱՐԲՈՍՆ

(Այս նամակը բանտին մէջ գրուած է ներկայացնելու դատական տանց և նոյն իսկ մեծ եպարքոսին :)

Տէր,

Ինչպէս յայտնի է Ձեր բարձրութեան, ասկէ գրեթէ վեց ամիս յառաջ Փոքր Ասիոյ ներքին կողմերը տեղ տեղ յայտարարութիւններ փակցուեցան և փակցուելէն անմիջապէս յետոյ ձերբակալութիւնք տեղի ունեցան, այն ձերբակալելուց ընդհանուր թիւն գրեթէ մինչև 600ի հասաւ, որոնց ամէնքն ալ Հայեր էին: Կառավարութիւնը ամենախիստ միջոցներու և անյուր չարչարանքներու գործադրութեամբ կրցաւ իմանալ թէ՛ այս գործ Հայ գոմիթէի հեղինակութիւն է, (թէեւ բուն իրողութիւնն այս չէ, այլ թէ՛ Հայ գոմիթէն զանոնք ներսերը ցրուելու մասին ձեռնադրու կամ միջոց եղած է մի այլ գոմիթէի:) Բնութիւնք ամիսներ շարունակեցին և հուսկ ապա անկարելորդ կամ անպարտ համարուածներ Չատկի տօնի առթիւ ներմամբ արձակուելէ յետոյ միացեալք՝ 80է աւելի Հայեր՝ իբր գործի հեղինակներ, գրողիչներ և յեղափոխականներ ամբաստանուելով՝ բարձրագոյն հրամանաւ Պաղատիոյ դատարանին առջեւ հրապարակային դատաստանի ենթարկուեցան: Սոյն այս խնդրոյ համար հրապարակային անունը քաղաքային ատենանը նորութիւն մի կրնար համարուիլ, թէ և մենք չէինք կրնար հաւատալ թէ այս դատը հրապարակօրէն կրնայ լուիլ և արդարապէս որոշում տրուիլ, բայց մի քանի պարագաներ՝ որպէս են մասնաւոր հրաւիրելոց, ամեն ազգի կրօնականաց և անգղիական հիւպատոսի ներկայութիւնք, պահ մը կարծել տուին մեզ թէ՛ կառավարութիւնը վերջնականապէս ժողովրդեան տրտունջը իմանալու և խնդիրը հիմնովին ուսումնասիրելով արդարացի կերպով դատելու և գործը գոհացուցիչ կերպով կարգադրելու միտում մը ունե-

ցած լինի, հետևապէս ուրախութեամբ և ամեն բան խօսելու պարտականութեամբ մտանք ի դատարան:

Նախնական դատարանի մեզ նկատմամբ գոյացուցած կարծիքը և որոշած մեղադրարտութեան աստիճանը այս էր, «Ձերբակալուած Հայեր և իրենց հետեւողներ նպատակ ունենալով մի ինքնուրոյն իշխանութիւն ու հայրենիք ձեռք բերելու, առ այս յանդգնած են յեղափոխական կուսակցութիւններ և ընկերութիւններ կազմել, որպէս զի Թուրքիոյ մէջ գտնուած հաւատարիմ Հայ հպատակները կառավարութեան դէմ զինու պայքարութեամբ ապստամբեցնեն և սոյն նպատակաւ ալ արդէն սկսած էին դումարումներ ընել, դրամ հաւաքել, զէնք և հրոսակային խումբեր պատրաստել, մարդասպանութիւններ, բռնել, տէրութեան փութաները կողոպտել ևն ևն:» Ահա այս ենթադրութեամբ պատժական օրինաց 58դ յօդուածի տրամադրութեան համաձայն՝ ձերբակալելոց իւրաքանչիւրին պատժուիլն կը պահանջէր, աստիճանաբար, այս յօդուած ինչպէս յայտնի է, 3—15 տարի և մէկ մասն ալ յաւիտենական բերդարգելութեան կը տրամադրէ: Ամեն բան պատրաստ էր, դատարանի կողմէն օրինական փաստաբաններ կարգուած էին ամբաստանելոց անձնապաշտպանութեան համար, ամեն կողմէ բերուած էին վկաներ, որոց ամենեքին առանց բացառութեան՝ նոյն խնդրոյ առթիւ ի սկզբուն բանտարկուած և ապա Չատկի տօնի առթիւ ներմամբ արձակուածներ էին: Եւ ահա սկսաւ դատավարութիւնը, դատավարութեան ամբողջ միջոցին ընդհ. դատախազը միշտ և միշտ կառավարութիւնը պաշտպանեց և ո՛չ մի անգամ զամբաստանեալն, և բաց ասորիւր բոլոր խօսքեր՝ Թուրք հատարակութիւնը քրիստոնէայ հասարակութեան վրայ գրգռելու բնութիւն ունէին: Վկաները լսելու առթիւ 6դ դատաստանի միջոցին ատենանը՝ յետ առանձին խորհրդածութեան՝ արդար որոշում մի և վճիռ մը յայտնեց, որուն համեմատ վկայից ոչ թէ նախնական հարցաքննութեան միջոցին ճշման ու թելադրութեան ներքեւ ըսածները՝ այլ յաւէտ դատարանի առջեւ երգմամբ ըսածները վաւերական պիտի համարուին, բայց այս որոշում ի գործ չդրուեցաւ և ահա իսկոյն զգացինք մեր յու-

սախարութիւնը, զի յայտնի եղաւ որ ներկայ դատաստանն ալ ճիշդ ուրիշ անգամներ եղածներու պէս հակառակ օրինաց և արդարութեան՝ ամեն ձայն խեղդելով խնդրոյն դարձեալ իրենց ուղած գոյնը տալով զամենքը դատապարտել էր, և եղածները եւրոպական կառավարութիւնները խաբելու համար լոկ ձեւակերպութիւններ էին, և ինչո՞ւ զարմանանք, ո՞չ ապաքէն նոյն իսկ Պոլսոյ մէջ եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներու աչքին առջեւ մի և նոյնը կրկնուած էր Մուսա Պէկի հանրածանօթ խնդրոյն առթիւ։ Տեսնելու արժանի էր ամբաստանելոց աղէկտուր վիճակը, սպանդանոցի մէջ դիզուած ոչխարներու նման իւրաքանչիւրն իւր կարգին աղիւսորմ ձայներով իւր անմեղութիւնն հաստատել կը ջանար և նախագահին խղճին կոչում կընէր։ Ի զուր կը ճգնէին ոմանք հասկցնել թէ՛ իրենք ամենադառն տանջանաց ներքեւ խոստովանութիւններ ըրած և յերկրած էին և մասնաւոր հրահանգի համեմատ զրպարտութիւններ ըրած էին, և ոմանք՝ թէ իրենք նպատակ չունէին Օսմանեան կառավարութեան դէմ ապստամբելու կամ առանձինն իշխանութիւն ու հայրենիք կազմելու, այլ իրենք պարզ բողոքողներ էին կառավարութեան զրկանաց դէմ, պաշտօնէից բացարձակապէս ի գործ դրած զեղծմանց ու կեղեքմանց դէմ և ընդհանրապէս երկրին ամեն կողմը տիրած կենաց և ընչից անապահովութեան դէմ, է թէ՛ իրենց այս տեսակ ընկերութիւններն կազմելուն՝ նոյն իսկ այս կարգի անտեղութիւններն առիթ էին առած, և թէ՛ երբեք երկրին թշնամի խռովարարներ չեն, այլ երկրին բարեկարգութեանը ցանկացող հայրենեաց հաւատարիմ բարեկամներ են։ Դատարանի կողմէն այս կարգի բոլորովին արդար անձնապաշտպանութիւնները կ'ընդմիջուէին և կը խափանուէին և մինչև իսկ փաստաբաններու կողմէն ի մէջ բերուած օրինաւոր առարկութիւնները և պաշտպանութիւնները չուզեցին լսել, և նոյն իսկ ամբաստանելոց մի քանիներու կողմէն կարգացուելիք անձնապաշտպանական ճառեր բոլորովին արգիւնեցան, շտապաւ ուզեցին լնջուենել դատը և գայթակղութեան տեղի չտալու համար ամեն միջոց գործածեցին համարձակութիւնները լռեցնելու և դատը բոլորովին

խեղաթիւրելով անոր բոլորովին տարբեր գոյն մը տալու, և ահա կը ցաւինք ըսելու, յաջողեցան իրենց նպատակին մէջ, և վերջապէս նախագահը գոչեց «դատաստանը վերջացած է»։ Ասկէ երկու օր վերջը այն է Մայիս 31 երկուշաբթի օր մեզ նկատմամբ արձակուելիք դատավճիռները լսելու կոչուեցանք։ Սկիզբէն մինչև վերջը ամեն բան մասնաւոր հրահանգով կը գործուէր. ամբաստանելոց նստարաններուն վրայ 56 հոգի էինք, վերջապէս վճիռը արձակուեցաւ, 14 հոգի անպարտ արձակուեցան, 10 հոգի՝ մին կին՝ 7ական տարուան, 8 հոգի՝ 10ական, 6 հոգի՝ 15 տարուան բերգարգելութեան և 17 հոգի ալ՝ մին վարժապետ, մին քարոզիչ՝ մահուան դատապարտուեցան. պատժական օրինաց 54դ յօդուածին յաւելուածոյն տրամադրութեան համեմատ։ 1 հոգի, Ռուբէն ճէվահիրճեան մասնիչի դեր կատարած ըլլալուն համար, արձակուեցաւ և համարձակախօսներէն մէկը, Բերթէ Փափազեան, կանխաւ հեռացուցին բանտէն և կըսուի թէ իբր յիմար Պոլսոյ յիմարանոցը զրկեցին Եւ դեռ 30ի չափ Հայեր, ժամանակէ մը ի վեր ձերբակալուած իրենց կարգին կը սպասեն դատաստանի։

Ահա այս է խնդիրը՝ իր պարզութեան և ճշմարտութեանը մէջ, պատիժները՝ կարի ծանր, անգթօրէն և անխղճօրէն տնօրինուեցան, և բաց աստի բացարձակ անիրաւութիւններ և զեղծումներ ի գործ դրուեցան, զայս կ'ըսեմք մենք և կը հաստատեն հասարակաց կարծիք և մինչև իսկ թուրք հասարակութեան խղճամիտ դասուն կարծիքը։

Եւ ահա ներփակեալ կը յղենք Ձեր բարձրութեան դատապարտելոց ցուցակը, լռութեան դատապարտուած պաշտպանողական ճառերը, ինչպէս նաև բանտերու մէջ և բանտէն դուրս ի գործ դրուած տանջանաց և խժեթութեանց ցուցակը հանդերձ պարագայիւք։

Ձայս ներկայացնելով Ձեր բարձրութեան, կուգամք խոնարհաբար խնդրելու որ բարեհաճիք Ձեր բարձրութեան հաճոյ թուած կերպով ի փրկութիւն մեր գործելու շնորհ մը ընել մեզ։

1893, Յունիս 7

Պաղատիա

ՅԱՆՎԱԿԱՆ ԵՆՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

ՄԱՀՈՒՄՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

		Տարիք	
Անտոն Ռչտունի	Կ. Պոլսեցի	45	Խմբագիր
Կ. Թումայան	Մարգարանցի	45	Բրոֆէսոր
Յ. Թ. Գոյան	"	28	"
Յակոբ Պաշտունի	Կէվրէքցի	42	Վաճառական
Սիրակ Քէչէճեան	Եղգլատցի	35	Լուսանկար
Մարտիրոս ձիւնեան	Էֆէրէցի	19	Դպրոցական
Դանիէլ վրդ. Սըրբեան	Տէրէվանքցի	43	Վանահայր Ս. Սարգիսի
Բարսեղ Տեօքմէճեան	Կեսարացի	28	Վաճառական
Կարապետ Ալաճճեան	"	30	"
Յակոբ ձէպիտէլիքեան	"	30	Շաքարավաճառ
Յովհաննէս Արզումանեան	"	25	Բանգ աղագործ
Կարոյ Քէրէմէճեան	Թաւաղցի	24	Ուսուցիչ
Փանոս Եղգլատցի	"	30	Հրացանագործ
Միրճանիսան Արթուրեան	"	24	Հիւն
Կիւլպէնկ Համալեան	"	20	"
Սիրակ Եղգլատցի	"	23	ԿԱռաքան
Թորոս Մառուկեան	Կիւրինցի	25	Վաճառական

15 ՏԱՐԻՍՆ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

Մկրտիչ Բաբաղեան	Մարգարանցի	25	Խանութպան
Յ. Գարակէօցեան	"	25	Վաճառական
Մարտիրոս Գալուստեան	Կէվրէքցի	40	Բարոզիչ
Գարիէլ Վարսուկեան	Էֆէրէքցի	28	Կօչկակար
Յակոբ Թապաղեան	Թաւաղցի	42	Ժամագործ
Կարապետ Կիւրինեան	"	26	Նամակաբաշխ

10 ՏԱՐԻՍՆ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

Յարութիւն Սիմանեան	"	48	Ուսուցիչ
Միհրան Վարդանեան	—	28	Խանութպան
Հճի. Յակոբ Տէվլէթեան	Պաշտունցի	44	"
Ստեփան Պոլաճեան	Էֆէրէքցի	32	Հարկահաւաք
Սենեքերիմ Քէպուկեան	Եղգլատցի	23	Վարժապետ
Մուշեղ Զօրլուեան	"	30	Կաղապարիչ
Յակոբ Զօլաքեան	Կեսարացի	25	Կօչկակար
Մամա Յոնտեան	"	22	Ապխտարար

7 ՏԱՐԻՍՆ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՑ

Ղազարոս Աստուրեան	Հաճի Գեղացի	24	Խանութպան
Սարգիս Միտիլլիեան	" "	30	Դերձակ
Գալուստ Ուզունեան	" "	25	Վաճառական
Խաղար Օղլաքճիեան	" "	38	Ուստայանկ
Յովհան Գարաբիւլաճեան, Կեսարացի		23	Սպասաւոր
Դանիէլ Գարաբաղեան	"	26	Ուստայանկ
Յովհաննէս Տիրատուրեան, Կարմիրցի		33	Կառապան
Արսէն Գալֆաեան	Թաւաղցի	34	Փառտարան
Շաւարշ Եստեան	"	39	Վարժապետ
Տիկին Սրբուհի Քէլլէճիեան Էֆէրէքցի		33	

ՆԵՄԵԿ ՅԵԳԻՊՏՈՍԷ

Ձեր թերթի անկողնակալ և ազդու նկատողութիւնն Գահիրէի վերջին դպրոցական խառնաշփոթեանց մասին և հրատարակած երկու թղթակցութիւններն իդունեցան, և փութով ունեցան գնահատելի արդիւնք. նոյն թուոյն հոս ժամանելուն երրորդ օրն Պրն. Նաւասարդեան պաշտօնի վերակոչուեցաւ: Պարտաւոր եմ սակայն ցաւ ի սիրտ խոստովանիլ թէ դպրոցն ինզճ վիճակի մէջ է, և կը լսեմ ալ թէ վարձապետաց յոյժ համեստ ամսաթոշակներու վճարումն առկախած են: 4 միայուն և 3 ալ այցելու դասաւանդներով կառավարուող դպրոցի մի ամսական պիւտճէն 30 նաբուէսն է Գահիրէի պէս դժուարակեաց երկրի մի մէջ. ասկէ կրնաք մակաբերել թէ որքան գին կ'ընծայեմք կրթութեան, և ան ալ ընծայելու կը դժկամակիմք: Սրբազան Իւթիւճեան ամսէ մ'աւելի է որ յԱղէքսանդրիա իջած է, կ'ասեն թէ ամառն հոն պիտի անցունէ: Կարծեմ թէ մեր Սրբ. առաջնորդն, արժանաւոր վարժապետի մի հետ ինչպէս ալ որ բաղդասուի, իւր 20 ոսկի ամսաթոշակն ստանալու ունէ նեղութիւն չի կրեր թէպէտ յԱղէքսանդրիա լինի թէպէտ ի Գահիրէ, միայն թէ չի մոռնայ թէ իւր պարտքն է ազգին պէտքերուն վրայ խորհիլ և ազգին ուսուցիչներուն ալ պէտքերն չմոռնալ: Եթէ Հայ մամուլն խղճամիտ, անաչառ և պարտաճանաչ լինէր ըստ օրինակի «Հայքի», որքան յառաջացած պիտի լինէին առաջնորդող և առաջնորդեալ: Եթէ մեր առաջնորդ սրբազաններն իրենց կոչման և դրից համաբերձ գտնուէին, յեղափոխական գործիչներու անգամ պէտք չէինք ունենար:

«Ազգային Քաղաքականութիւն» խորագրով ձեր ուսումնասիրութեան առաջին երկու յօդուածներն արդարեւ հիանալի են, աւելին չասեմ որ շողոքորթ չերեւիմ: Խնդրոյն ծուծն էք հանած. Հայկական խնդրոյն վրայ առաջին անգամ է որ այդպիսի իմաստասիրական վերլուծում մի կը կարգամ: Յօդուածին եզրակացութեան անձկանօք կը սպասենք:

Գահիրէ, 19 Յունիս, 1893

* * *

ԼԱՆԵՐԻԿԵՅԻ ՀԱՅԵՐՆ

ԽՆԴԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻ ԼԻՆԵԼՈՒ

Ամերիկեան քաղաքացի եղած Հայերու թիւն յոյժ փոքր է: Ասոր գլխաւոր պատճառն այն է որ մեր պանդուխտներու մեծ մասն չի կարծեր թէ ամերիկեան քաղաքացիութեան իրաւունքն կրնայ յարգուիլ եւ իրեն պաշտպանութեան միջոց լինիլ երբ ի Տաճկաստան վերադառնայ: Տաճկաստան վերադարձեալ մեր եղբայրներէն ոմանք համարձակած անգամ չեն յայտարարելու թէ իրենք Ամերիկացի են. է որ իւր քաղաքացիութեան պաշտօնական գրերն իբրեւ վտանգաբեր թղթեր պահած թագուցած է, և է ևս որոյ ձեռքէն ամերիկեան հիւպատոսք առած են թղթերն և ետ չեն տուած:

Այսպիսի դէպքերու լուրն ի հարկէ չի քաջալերեր որ ուրիշներ եւս քաղաքացի լինին: Մեզ կը թուի սակայն թէ մեր եղբարք, որք այսքան հեռուոր երկիր մի կու գան և այսքան նեղութիւն կը կրեն, պէտք է որ իրենց շահերու ցանկին մէջ կարենան հաշուել նաեւ թրքական լծէ ազատութիւնն, եւ յետ վերադարձի ի թուրքիա՝ Ամերիկայի դիւանագիտական գործիչներու պաշտպանութիւնն:

Մեր չուզեցինք սակայն քաջալերել մեր ազգայիներն Ամերիկացի լինելու, վասնզի գիտէինք թէ փորձանք մանաւանդ քան պաշտպանութեան երաշխիք մ'էր ամերիկացի ճանչուիլն ի Տաճկաստան: Պէտք է նախ ջանայինք հասկանալ թէ Ամերիկայի եւ Թուրքիոյ միջև դաշնագրական ինչ համաձայնութիւն կար այս մասին, և ապա աշխատէինք ազդեցութիւն գործել Ուօշինկթընի կառավարութեան վերայ որպէս զի աւելի կորովի եւ արժանաւոր պաշտպանութիւն մի ընծայէր իւր Հայազգի քաղաքացւոց ի Թուրքիա:

Առ այս նպատակ մեր աշխատութիւն սկսանք նամակ մ'ուղղելով առ Վոսմ. Տէր Կրէշէմ, պետական քարտուղար Միացեալ Նահանգաց: Ահա մեր առաջին թղթթոյն և անոր տրուած պատասխանին պատճէններն ---

14 Յուլիս, 1893 Նիւ-Եորք
ԱՌ ՎՍԵՄ. ՈՒԱԼԹԸՐ Գ. ԿՐԷՇԵՄ

Պետական Բարտուղար
Ուօշինկթըն, Տ. Բ.

Վսեմ. Տէր,

Բաւական թուով Հայեր, երբեմն թուրքիոյ Սուլթանին հպատակ, որք Միացեալ Նահանգաց մէջ վաճառականութեամբ կը զբաղին և Ամերիկեան քաղաքացի եղած են, կը բաղձան գիտնալ ճշդիւ թէ այս երկրին եւ թուրքիոյ միջեւ ի՞նչ դաշնագրական համաձայնութիւն կայ վերաբերութեամբ օրինականութեան քաղաքացւոյ առանձնաշնորհմանց ու է մէկուն որ կրնայ վերագառնալ ի թուրքիա և անցունել անդ տարիներ:

Իբրեւ խմբագիր «Հայք»ի միակ Հայ թերթին սր կը հրատարակուի այս երկրի մէջ, ես շատ կը փափաքիմ կարող լինել այս նկատմամբ ինձ ուղղեալ հարցմանց պատասխանելու և յոյժ շնորհապարտ պիտի մնամ Ձեզ եթէ շնորհք անէք պատասխանել ինձ այս խնդրոյ մասին:

Եմ

Վսեմ. Տէր,

Ձեր յոյժ խոնարհ և հնազանդ ծառայ
Մ. Ս. Գաբրիէլեան

ՊԱՏԱՍԽԱՆ

Պետական Պաշտօնատուն
Ուօշինկթըն, Յուլ. 18, 1893

Բժշկապետ Մ. Ս. Գաբրիէլեան
Թ. 202 արեւմտեք 23դ. փողոց,
Նիւ-Եորք

Տէր,

Ներկայ ամսոյ 14 թուականաւ ձեր նամակն ստացայ, յորում յաղաքս այն Հայոց որք առաջ թուրքիոյ հպատակ լինելով՝ այս երկրի մէջ վաճառականութեամբ կը զբաղին եւ ամերիկեան քաղաքացի եղած են, կը խնդրէք տեղեկութիւն նկատմամբ դաշնագրական ճիշդ համաձայնութեան ընդմէջ Միացեալ Նահանգաց և թուրքիոյ «վերաբերութեամբ քաղաքացիական մէջնաշնորհաց արժէքին ու է մէկուն սր կրնայ ետ երթալ ի թուրքիա և անցունել անդ տարիներ»:

Երկուց երկրաց միջև ձեր յիշած դէպքերն բովանդակող քաղաքացութեան դաշնագիր չկայ ի զօրութեան:

Յայտնի է թէ թուրքիոյ օրինօք օսմանեան հպատակ մի չի կրնար այդ հանգամանքէն մերկացունել ինքզինք առանց կայսերական կառավարութեան յատուկ հաւանութեան: Եթէ առանց այդ հաւանութեան ընդունի ոք օտար քաղաքացութիւն, անօգուտ կը նկատուի այն թէ՛ իւր անձին և թէ՛ իւր զաւակաց նկատմամբ: Նաև օրէնքն կը տրամադրէ թէ ամեն անձ որ օտար հպատակութիւն ընդունելով օտար գինւորական ծառայութեան մէջ կը մտնէ՝ առանց Սուլթանին թոյլտուութեան, կրնայ այնպիսին անհատաբար հռչակուիլ իւր օսմանցութեան եւ այդ պարագայի մէջ բոլորովիլ օսմանեան հողը վերագառնալէ արգելուիլ:

Եմ, Տէր, ձեր հնազանդ ծառայն

ՈՒ. Գ. ԿՐԷՇԵՄ

Տեսնելով թէ վսեմ. Բարտուղարն մեր հարցման բուն էական կետին չէ պատասխանած, հետեւեալ նամակն յղեցինք նմա, Յուլիս 20ին. —

Վսեմ. Տէր,

Ստացայ ձեր շնորհապարտիչ նամակն ամսոյս 18 թուականաւ գրեալ ի մասին այն խնդրոյ թէ նախապէս Դրան հպատակ եւ յետոյ ամերիկեան քաղաքացիութեան պատուոյն ընդունուած Հայեր ի՞նչ տեսակ վարմունք պիտի զանեն եթէ երբէք ի թուրքիա վերագառնան: Որովհետեւ մեր երկրին և թուրքիոյ միջև քաղաքացիութեան դաշնագիր չկայ ի գորութեան, օսմ. կառավարութիւնն կրնայ այնպիսի անձի մի իբրեւ ճշմարիտ Ամերիկացւոյ հետ վարուիլ չուզել: Խնդիրն այն է թէ Ամերիկեան կառավարութիւնն ինչպէս պիտի վարուի այնպիսոյն հետ: Անշուշտ այնպիսին յօժար պիտի լինի թրքական երկրէն ելնել եթէ պատշաճօրէն հրաւիրուի զայդ անելու, սակայն մի և նոյն ժամանակ պիտի կրնայ ապաւինիլ մեր կառավարութեան պաշտպանութեան իբրեւ ճշմարիտ Ամերիկացի: պիտի չկրնայ:

Եմ ևն.

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ,

Եւ ահաւասիկ պատասխանն զոր ստացանք այս փափուկ հարցման: —

Ուօշինկթըն, Յուլ. 25, 1893

Տէր,

Ամսոյս 20 թուակիր ձեր նամակ աստ

ցայ անդրադոյն վերաբերութեամբ վիճակին այնպիսեաց որք բնիկ թուրքերացի լինելով ընդունուած կը լինին ամերիկեան քաղաքացի և ապա կը վերադառնան իրենց ծննդեան երկիրն :

Միացեալ Նահանգաց դեսպանատունն ի Կ. Պոլիս չարունակ կը կոչուի միջամտել ի նպաստ վերադարձեալ թրքածին քաղաքացւոց որոց պահանջին նկատմամբ երկուց երկրաց օրէնքներն չեն համաձայնիր : Ուր որ պարագայք կրկին պարտաւորութեան ներքե կը դնեն անձ մի ծննդեան երկրին և որդեգրման երկրին մէջ, միտ գործնական չէ մէկ երկրին քաղաքացիութեան օրէնքներն յարգել սալ միւս երկրին մէջ՝ երբ անոր օրինաց անհամաձայն կուգան և երբ անհատն կամովին դրած է գանձն վերջ նոյս իրաւասութեան սահմանին մէջ :

Եմ, ևն .

Ա. Ա. Վ. Ս. Տ. Ի

Փոխ-քարտուղար

Այս վերջին պատասխանին վերայ խորհրդածութիւն աւելցունել աւելորդ է : Պարզապէս կը տեսնուի թէ Ամերիկայի Կառավարութիւնն, թէ և յանչափս հօգորադոյն քան զթրքականն, պատրաստ չէ վեհանձնօրէն պաշտպան կանգնիլ այն Հայոց որք երդմամբ առաջի դատաւորին ընդունուած են Ամերիկեան քաղաքացի՝ կատարելով ամերիկեան օրինաց բոլոր պահանջներն :

Պէտք է զգացունել այս երկրին կառավարութեան թէ իւր պարտքն է պաշտպանել իւր հպատակներ ամեն երկրի մէջ և մանաւանդ Տաճկաստանի մէջ ուր օրէնք և արդարութիւն թղթի վերայ միայն կը գտնուին և ուր Կառավարութիւնն անամօթ խրախուսիչն է չարագործաց և անխիղճ հալածիչն ամենայն բարութեան և բարեսիրաց :

ՆԵՄԵԿ ՔԵԼԻՓՈՒՆԻՇԻ

Յրէզնոյ, 14 Յուլիս 1893

Նիւթական տեսակետով բաւական լաւ դիրք ունին տեղւոյս Հայերն, մանաւանդ 8--10 տարի առաջ գաղթողներն : Միացեալ Նահանգաց մէջ գտնուող Հայերու նիւթական վիճակին կատարելա-

պէս ծանօթ չեմ որ կարող ըլլամ բաղդատութեան դնել, բայց լրածներէս որչափ որ կրցած եմ ըմբռնել քաղաքիս Հայերը աւելի հանդիստ են ու ապրուստի ծանր հոգերէն բաւական ազատ, և զայդ կը պարտիմք ոչ թէ գործի կամ չահու առատութեան այլ Քաղաքիս փոքրութեան և ծախուց նուազութեան, գիտէք արդէն թէ այս քաղաքը գիւղ մ'է գրեթէ, հետեւապէս չունիմք այն մանր ու աւելորդ ծախքերն որք մեծ քաղաքներու յատուկ են և անհրաժեշտ ծախուց՝ կրնամ ըսել, մեծագոյն մասը կը կազմեն : Քաղաքիս մէջ բնակող Հայ մը եթէ ճարպիկ ու գործունեայ է կրնայ 3--4 անձէ բաղկացեալ ընտանիք մը սնուցանել նոյն իսկ հասարակ գործաւորութեամբ, գուցէ քիչ մ'ալ դրամ կարող լինին աւելցունել իւրեանց ծանօթ խնայողութեամբն ու ժուժկալութեամբն :

Տեղւոյս Հայոց թիւը կը հասնի 250ի այր կին և տղայ . բաղդատմամբ ուրիշ նահանգաց մէջ գտնուող Հայերու, այս տեղ ամենէն մեծ թիւն կը կազմեն ընտանիք ունեցողները . 45 տուն կը հաշուի ընտանիքի տէր որոյ թիւն 175ի չափ է . մնացեալք ամուրի են և որոց մէջ կայ փոքր մաս մը ամուսնացեալ բայց առանց ընտանիքի տեղս գաղթած : Ընտանիք կազմողներուն մէջ կան մի քանիներ որ տեղս գալէ ետք ամուսնացած են՝ մեծաւ մասամբ Տաճկաստանէն բերել տալով իւրեանց կենակիցն : Կան բաւական թուով հասուն երիտասարդներ ու օրիորդներ, բայց երկու կողմանք ալ դժկամակ են ընտրութիւն ընելու և միմեանց հետ ամուսնանալու . այն երիտասարդն որ այս ինչ օրիորդին ձեռքն խնդրելու կը փափաքի մերժողական պատասխան կ'ստանայ և փոխադարձաբար, կը յուսացուի սակայն թէ հարկը պիտի մօտիկցունէ այդ իրարմէ խուսափողներն :

Քաղաքիս գլխաւոր գործն է այգեգործութիւնն, Հայերու մեծագոյն մասն ալ այդ գործով կը պարապին, կան որ այգետէր են ու իրենք կը մշակեն ու կը խրնամեն իրենց երկիրն . կան ալ որ այլոց քով կը գործեն օրականով . հազիւ կը պատահի որ Հայ այգետէր մը Հայ գործաւոր բանեցունէ, Հայ գործաւորն եւս նախադաս կը համարի Ամերիկացիի քով գործել քան թէ Հայս . հարկ չկայ ման-

րամասն բացատրելու սորա պատճառն քանի որ գաղտնիք մը չէ Հայերուս իրարու դէմ ունեցած խրոխտ ու արհամարհոտ վարմունքն և օտարաց առջև խոնարհ եւ մինչև ստորութեան հասնող դիրքն . . . :

Բաւական մեծ թիւ մը կը կազմեն Հայ արհեստաւորներն ու խանութպաններն, այժմ Յրէզնօի մէջ կան 25ի չափ խանութպաններ, որոց 6ը դերձակ, 2 կօշկակար, 3 պողպատաւոր կամ նարապատաւ, 3 ժամագործ, 4 հնավաճառ զգեստի ու կարասեաց, 2 սափրիչ, 1 փոխատու կամ գրաւատու (loan officer), 1 դեղագործ, և 1 տպագրիչ (ծանուցող մներ կամ դանազան քարտեր կը տպէ) . իբր ծանօթութիւն գէշ չը լինիր ըսել թէ հնավաճառներէն մին բժշկութիւն, մանկաբարձութիւն, դեղագործութիւն, ներկարարութիւն եւ քարոզչութիւն կընէ միանգամայն : Գանի մի Հայեր ալ կան որք ձեռքի կամ ձիւ կառքերով պատուի մանրավաճառութիւն կընեն փողոցներն ու շուկաներն, թողունք որ Մնացեալ Յայերն ալ ունենոր թէ չունենոր տարւոյն 2—3 ամիսները պատուի մանրավաճառութեամբ կը պարապին՝ որոցմէ ոմանք ամբողջ ընտանիքով, սոցա մէջ կան այնպիսիներ որք իրենց հաշուով 40—50 հազար տալերի՝ իսկ այլոց հաշուով 15—20 հազար տալերի կարողութեան տէր են ու տակաւին փողոցները չընկնելով «Փայլ սէնթս ութըր մէլըն», կամ «նայս Փրութս» կը պօռան առտուընէ մինչև իրիկուն . . . :

Ամերիկացիներէն խիստ քիչ կը տեսնուի որ հողատէր լինին ու մի և նոյն ատեն այդ կարգի մանրավաճառութեամբ պարապին, սակայն կը թուի թէ Հայերուս համար ամեն միջոց լաւ է հերիք որ հինգ սենթի չափ մ'ունենամք . ես այնպէս կը կարծեմ և համոզուած իսկ եմ թէ՛ տեղւոյս Հայերուն նիւթապէս կարող դասը եթէ քիչ մը անձնապատուութեան զգացումն ու հասկացողութիւնն ունենար, եւ կամ ձեռներեցութեան ոգին իրենց մէջ մուտ գտած ըլլար, անտարակոյս աւելի լաւ դիրք ու լաւագոյն չափու աղբիւրներ պիտի ունենար, բայց դժբաղդաբար մեր տեսութիւնն, գաղաքարներն ու գործունէութեան միջոցներն խակ են :

Չը մոռնամք յիշելու թէ մեր Հայ Տիկիներն և օրիորդներն ալ իրենց առտնին զբաղումէն զատ ունին դրամ չահելու

միջոցներ ու գործեր, մեծաւ մասամբ պատուի գործարաններու մէջ կաշխատին տարւոյն 3—4 ամիսներն . անոնք որ գործունեայ ու ճարպիկ են 100 տալէր կրնան շինել այդ գործէն : Մաս մ'ալ կան որք իւրեանց սեպհական երկրին մէջ կաշխատին կանաչեղեններ մշակելու ու ծախելու գործովն : Անտարակոյս գոհ եմք որ Հայ կիներ ամենուրեք և յամենայնի ցոյց կուտայ իւր գործունէութիւնն աշխատասիրութիւնն և իւր ամուսնոյն ճշմարտապէս լծակից ու հաւասար լինելու գիտակցութիւնն բայց մի և նոյն ատեն չեմք կարող չցաւիլ այնպիսեաց համար որք ապրուստի ու հագուստի հոգն ապահոված ըլլալով հանդերձ՝ դարձեալ նախադաս կը համարին 5 սենթի չափն քան իւրեանց ուղեբոց և մանաւանդ դասերց դաստիարակութեան կարևոր ու մեծ խնամքն : Փափաքելի էր որ տեղւոյս ունեւոր Հայ Տիկիներն բոլորովին անտես չընէին մշտքի ու սրտի մշակութեան ամենապիտանի ու կենսական գործն :

Տակաւին շատ բաներ կան գրուելիք տեղւոյս Հայերու նկատմամբ՝ բայց բաւական երկար եղաւ և մտադրածէս ալ աւելի գրեցի, ուստի բաւական կը համարիմ խոստանալով գրել ձեզ ուրիշ առթիւ մը՝ մեր ընկերական ոգւոյն, Ազգային ըզգացմանց ու հանրային խնդիրներու մէջ մեր բռնած դիրքն ու ընթացքի մասին, ինչպէս նաև «Յրէզնօյի Հայ Գաղթականաց Միութիւն» ընկերութեան վրայօք :

Ընդունեցէք յարգանքներս, որով մնամ Ձերդ

* * *

ՎԱՐԴԵՆԻՍԾԻ ԿՆԻԿ

Կռիւ կէր վարդենիս Մուսա Պէկի դէմ թալան տանելու եկած էր էդ շուն .
Հաւար էձգեցին, գիւղէն՝ Արտօնքէն
Ամեն մարդ վազեց, մարդ չմնաց տուն :
Մինակ խորթ կէնձ մը նստած կը ժղլէր :
Քիրիվի մը հետ՝ բուխերիկին խեչ .
Ձերդու թարք չտուեց, ժողուն անուշ էր—
Չը գնաց հաւար, մնաց ուր տան մէջ :
Մէկ մ'լ՝ էնադեհաց եկաւ ուր կնիկ,
Ունքեր պուտած, կախած քիթ մուռթ,
Վերուց զուր լաչակ գլխուց խորոտիկ,
Թալեց վըր էրկայ, ըսեց «Ա՛ռ գլխուդ» .
Ու վերուց զթուֆանկ որ սուռէն էր կախ

ինք կերթէր հաւար... էրիկ տեղից թռաւ, Առաւ զջէք ձեռքից ու «վախ լըմըն վախ» Ասելով վազեց հաւարին հասաւ:

Հազար ապրին հմալ կտրիճ կնկըտիք, Որ կռուի զրկեն զուրանց էրկըտիք:

ՊԵՐՃ ՄՈՒՇԼՈՒ
(Հնգուկ)

Զայս գեղեցիկ ստանաւոր կը պար-
գեմք հետեւեալ համառօտութեամբ.—

Կռիւ կար ի վարդենիս Մուսա պէկի
դէմ. հաւար ձգեցին, և Սրտօնքէն ամեն
մարդ վազեց յօգնութիւն. միայն մէկ կտ-
րիճ երիտասարդ նստեւ, կը խօսակցէր
քուրդ բարեկամի մի հետ. չուզեց թո-
ղուլ զՔուրդն, զի խօսակցութիւնն անոյշ
էր. և ահա անդէն (կամ անդիէն) եկաւ
իւր կին զայրագին, վերուց զիւր լաչակ
և ձգեց զայն իւր էրկան գլխոյն վերայ ի
նախատինս, ու ինքն զհրացան առած շար-
ժեցաւ ի հաւար... Այրն՝ յանդիմանուած՝
ընդոստ ելաւ առաւ զգէնքն իւր կնոջ
ձեռքէն և վազեց հաւարին հասաւ:

Կեցցե՛ն քաջ հայ կանայք սրբ ի կռիւ
կը յղեն զիւրեանց երիկներ:

(Որոշ հայցականի 2 նախդիրէն խրո-
չող մեր երիտասարդաց դիտել կուտամք
այդ մշեցւոյ լեզուին 2 նախդիրներն.—
2քրդու թարք չտուեց.— վերուց 2ուր
լաչակ.— վերուց 2թուփանկ.— առաւ 2-
լէք.— 2իւրեանց էրկըտիք:)

Քաղաքական

Ազգային

ԵՒ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ ֆռանսական լրագրաց օսմանեան
բանակին սպայք ոմանք հնարած են ան-
ծուխ վառօղ մի գերազանց քան զերո-
պեան բանակացն: Ռէնօֆ փաշայի նախա-
գահութեամբ մասնախումբ մի բաղդա-
տութիւններ կատարելով ընտրած է նո-
րահնար բնիկ վառօղն: Այս վառօղի հը-
նարիչք բարձրացած են իրենց աստիճանաց
մէջ, իզգէթ փաշա որ գնդի գորապետ
էր՝ զօրաբաժնի զօրավար անուանուեր է,

և Նէճիս Պէյ ևս: Բնականապէս օսման-
եան բանակն շատ հպարտացէր է այս յս-
ջողութեան համար որ գիտական աշխար-
հի ուշադրութիւն կը հրաւիրէ իւր վերայ:

Այս գիւտի իրական գերազանցու-
թեան վերայ մեք շատ կը տարակուսիմք:

Խտիվին ի Պօլիս ուղեւորութեան ծա-
խուց համար Եգիպտոսի նախարարաց ժո-
ղովն 66 հազար ոսկի քուէարկեր է, զոր
մերժեր է անգլիական ներկայացուցիչն
պատճառելով թէ անգլիական խորհրդա-
րանն ալ թագուհւոյն ուղեւորութեանց
ծախքերն չի հոգար:

Ֆիշպուրկէն կը գրէ Տէր Վ. Վ.

Քաղաքիս ԱՐՇԱԼՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ
մասնաճիւղն միանալով Պոսթընի ԾԱՂԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ մասնաճիւղին Հնչակեան
կուսակցութեան, պիտի սօսեն Գում-Գա-
բուի հերոսների յիշատակն ի Պոսթոն, ամ-
սոյս 27ին, Երեկոյեան ժամ եօթին:

Քաղաքիս մասնաճիւղն պիտի երթայ
ի Պոսթըն մասնաւոր կառքով առաջի և
յետկոյս Հայկական և Ամերիկեան դրօ-
շակներ և յեղափոխական դրօշ, նաև անգ-
լիերէն և հայերէն լեզուաւ նշանաւորաներ:

Կը տեղեկանամք թէ Նիւ եորքի Հն-
չակեան մասնաճիւղն ևս հանդէս պիտի
կատարէ նոյն դէպքին ի յիշատակ, Յու-
լիս 29ին, Քոսթըր և Պիլ շէնքին ժողո-
վասրահէն Հայք՝ երաժշտական խմբակ
առջեւ ունենալով՝ պիտի չու անեն մինչև
«Իւնեըն» հրապարակն և անկէ պիտի վե-
րադառնան Տգ պողոտայով ի ժողովասրա-
հն, ուր երգեր պիտի երգուին ու ճառեր
պիտի խօսուին:

Քէմպրիճի «Քրոնիքլ»ին մէջ կը կար-
դամք թէ մեր հայրենակիցներէն Տէր Ղա
զարոս գալաճան հեծելանիւ նորոգելու
խանութ մի բացեր է Փրոսփէքթ փողոց
ի թիւ 21, և թէ հեծելանիւի այս ինչ
մասին վերաբերեալ նոր գիւտ մի հնարեր
է:

Ուրեմն Լիեցի Տէր Ա. Արմէն միակ
տաղանդաւոր հայ երիտասարդն շէ որ
մեքենական գիւտերով կը զբաղի. ահա
ուրիշ մ'ալ, և թերեւս կան այլք ևս որք
մեզ անծանօթ մնացած՝ կ'աշխատին հայ
իմացողութիւնն արհեստական հնարքե-
րու վերայ փորձել յաջողութեամբ: Կը
շնորհաւորեմք զայսպիսիս և կը մաղթեմք
ամենայն յաջողութիւն:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐԾ

286, 77 Էդինհուս Նիւ Եորք
267 և 277 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ռ Բ Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
շափաւոր գնով

Յակոր Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ՆԴՐԱՐԻ Զ. ԷՔԻՉԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան
Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նա-
շանգաւ և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու
սուներու շահերն միեւնոյն տան վերաբե-
րելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց
դրամատանց միոյն հետ համաձայնութիւն
մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմե-
րն ստակի փոխադրութեան գներուն բա-
ւական տարբերութիւն մը ձեռք բերած
ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ա-
մենէն վար գներով ստակի փոխադրու-
թիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուր-
քիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըս-
տակ զրկել զէպի Եւրոպա կամ Կ. Պոլսոյ,
Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալա-
թիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիլէգէկ,
Չունքուշ, ընդհանուր չըջականերով,
պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց
հասցէներուն, որով իրենց փափաքանաց
համեմատ պիտի ստանան անմիջապէս ի-
րենց փոխանակադրերն ամենէն գոհացու-
ցիչ կերպով, և փոխարէնը պիտի գան-
ձուին առանց դժուարութեան և առանց
որ և է ծախքի մի հարկ ունենալու:

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 Փր. 50ս.
Բ. տարի 2 տողար կամ 10 Փրանք

ԲԺԻՇԿ ԿՈՆԻԿՈՎ

Պատիւ ունի յայտարարել Պօսթընի
Հայ Հասարակութեան, որ ինքն բժշկա-
կան ուսումնի աւարտած լինելով Զուիցե-
րիոյ մէջ և ժամանակ մի Փարիզ բժշկու-
անէլէն յետոյ եկած Ամերիկայ և Պօսթըն
Հաստատուած է, շատ հմուտ է վարակիչ
ախտեր բժշկելու մէջ, ու իր պաշտօնա-
տեղին կը գտնուի

361 Harrison Avenue

Office hours; 8—10 A.M. 1—3 & 5—7 P. M.

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր
ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկ-
ներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ
անունս Լաչանս է, և խանութս կը գտնու-
նուի Ֆրոնթ Իթրիթի 60 Նիւմէրոն: Մի-
այն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ:
Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և շունչը չհատ-
ցունել գին կտրելու համար, և ո՛վ որ
չուզեր որ ստքն նասըր լինի, թող գայ
և իմ ընտիր կօշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ

60 Front St. Worcester, Mass.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հա-
ւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն
Հարստահարութեանց և Դրան հակառակ
քաղաքականութեան ահաւոր նկարագիրն
և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգա-
յին շարժմանց առաջնորդողի մի փորձա-
ռութեան և ձգտմանց շրջափոխութիւնն:
Դին 20 սէնթ կամ մէկ Փրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական
տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, Հան
դերձ պատուական և լաւ յաջողեալ
պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ
կամ 50 սանթիմ:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21
դաս 16 պատկերօք և յաւելուածով ազ-
գային ու օտար հատընտիր ընթերց-
ուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէ
եանի, 1891, գին 1 թալէն կամ 5 Փրանք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ 1554 B. Way,
46 և 47 փողոցներուն միջեւ

Constantinople Bazaarի (Գոնսթանթինոփլ
Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ
ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի)
ուրիշ զանազան թուրքիոյ ապրանք, և կը
ծախէ դիւրագին գներով այն Հայերու
որք կուզեն ամարանոցներն և այլ տեղեր
երթալ վաճառականութեամբ, և անոնց
ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բա-
րեկամներուն և գործարանապետներուն:
Թէ ապրանաց հարազատութեան և թէ գնե-
րու չափաւորութեան մասին կրնամք կա-
տարելապէս վստահեցունել մեր Հայրենա-
կիցները, ինչպէս արդէն շատեր փորձով
գիտեն:

Նաև փոքր գոմասիոնով ունի թրքա-
կան ապրանք կը գնէ ու կը յղէ յանձնա-
րարողաց այլ և այլ նահանգներ, և այս-
պէս ճամբու ծախքեր խնայել կուտայ մեր
վաճառականաց:

HOPKINS & ATKINS
PATENTS
Washington, D. C. 20
years' experience
write for information

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի
արդոյ Հայ հասարակութեան թէ իմ վե-
րայիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըր-
պըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և
այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը
լինի իմ Հայ հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակա-
պէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպա-
սեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգու-
նօք

Ձերդ
Բանտօլ

**THE WORCESTER MECHANICAL
SAVINGS BANK**

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԻԷՆԻԲՍ ՍԷՅՎԻԿՍ ԳԷՆԴ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողու-
թիւններն կրնան ապահովապէս դնել վե-
րայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը
ճարէ Յուշվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտե-
մանոց կէսէն հաշուելով:

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց
չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է
385 Մէյն փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

**NATIONAL MUTUAL
INSURANCE Co.**

WORLD BUILDING, NEW YORK

Ե.Օ.Գ.ԵՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՉ**ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ****ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել
է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը
քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշ-
կին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ
տարին այսչափ թալէն, 20 կամ 30 կամ
աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր
ժառանգորդք կ'ընդունին հազար թալէն,
եթէ պայմանն հազար թալէն է, կամ
մինչև հինգ հազար թալէն, ըստ պայմա-
նին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի,
և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ,
և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանա-
դրեալ հազար կամ աւելի թալէն կը
վճարուին ընկերութեանս կողմանէ այն
ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն
կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու
«Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անդե-
կութիւն տալ

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ. Ա. Բ. Ի Է Լ Ե Ա Ն